ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«03» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 242

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ Խ. ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 78 ՀԱՍՑԵՈՒՄ ԽՈՐԵՆ, ՎԵՐԳՈՒՇ, ՄՈՒՐԱԴ,ԳԱՐԵԳԻՆ,ԳԱԼՈՒՍՏ ԵՎ ՍԱՀԱԿ ՍԱՐԳՍՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10.11.22 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորեն, Վերգուշ, Մուրադ, Գարեգին, Գալուստ և Սահակ Սարգսյանների համասեփականության իրավունքով պատկանող, Կատայքի մարզի Գառնի համայնքի Խ. Աբովյան փողոց թիվ 78 հասցեում տնամերձ հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ***որոշում եմ***՝

1.Խորեն, Վերգուշ, Մուրադ, Գարեգին, Գալուստ և Սահակ Սարգսյանների. համասեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի վրա 1964թ.,1970թ,1987թ.1991թ. ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինությունները ճանաչել օրինական:

2. 2003թ. և 2008թ.կառուցված արտաքին մակերեսով 5.7 քմ, բնակելի նշանակության օժանդակ շինությունը ճանաչել օրինական համայնքապետարանի համապատասխան հաշվին (5.7քմ)*6000*0,167=5712 ՀՀ դրամ Ինքնակամ կառուցված թվով 7 դռների և պատուհանների համար 7*10000*0.167=11690 ՀՀ դրամ Ընդամենը

5712+11690= 17402 ՀՀ դրամ մուծելուց հետո

3. Ուժը կորցրած ճանաչել Գառնի համայնքի ղեկավարի ապրիլի 17-ի 2019թվականի N 101 որոշումը:

4.Որոշումն ուժի մեջ է ընդունման պահից :

Համայնքի ղեկավարի ժ/ա՝ Տ. Պողոսյան

2021թ. սեպտեմբերի 03
գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«03» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 243

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ Խ. ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 23 ՀԱՍՑԵՈՒՄ ԽՈՐԵՆ, ՎԵՐԳՈՒՇ, ՄՈՒՐԱԴ,ԳԱՐԵԳԻՆ,ԳԱԼՈՒՍՏ ԵՎ ՍԱՀԱԿ ՍԱՐԳՍՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10.11.22 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորեն, Վերգուշ, Մուրադ, Գարեգին, Գալուստ և Սահակ Սարգսյանների համասեփականության իրավունքով պատկանող, Կատայքի մարզի Գառնի համայնքի Խ. Աբովյան փողոց թիվ 23 հասցեում տնամերձ հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ***որոշում եմ՝***

1.Խորեն, Վերգուշ, Գարեգին, Գալուստ և Սահակ Սարգսյանների. համասեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի վրա 1992 թվականին ինքնակամ կառուցված 20.6քմ. բնակելի նշանակության օժանդակ շինությունը ճանաչել օրինական:

2.Խորեն, Վերգուշ, Գարեգին, Գալուստ և Սահակ Սարգսյանների. համասեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի վրա 2014թվականին կառուցված արտաքին մակերեսով 28.2 քմ, բնակելի նշանակության օժանդակ շինությունը ճանաչել օրինական համայնքապետարանի համապատասխան հաշվին (28.2քմ)*6000*0,167=28257 ՀՀ դրամ մուծելուց հետո:

3.Ուժը կորցրած ճանաչել Գառնի համայնքի ղեկավարի 17 ապրիլի 2019թվականի N 99 որոշումը և Գառնի համայնքի ղեկավարի հուլիսի 29-ի 2021թվականի N 211 որոշումը :

4.Որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ Տ. Պողոսյան

2021թ. սեպտեմբերի 03
գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«06» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 244

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՉԱՓՈՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության 2002թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետի դրույթներով, հաշվի առնելով, որ օրինական հատկացված տնամերձ հողամասին կից ինքնակամ զբաղեցրած հողամասը և օրինական հատկացված հողամասը մինչև 2001թ-ի մայիսի 15-ը ունեցել է նույն սահմանագիծը և փաստացի օգտագործել և մինչ օրս օգտագործվում է սեփականատերերի կողմից վճարվել է հողի հարկերը, քարտեզագրվել և նույն սահմանագծով ճանաչվել է որպես մեկ միավոր ինչը երևում է համայնքի հողակադաստրային քարտեզում և այն որ օրինական և նշված ինքնակամ զբաղեցրած հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի շարքում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակվում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ՝***

1. Վալենտին Հրաչիկի Ադամյանի կողմից փաստացի օգտագործվող՝ 07-021-0072-0051 ծածկագրում, 0.1292 հա հողամասի սեփականության իրավունքը ճանաչել ամբողջությամբ:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից

Համայնքի ղեկավարի ժ/պ Տ.Պողոսյան

2021թ. սեպտեմբերի 06

գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«09» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 245

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության Բյուջետային Համակարգի Մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով ***որոշում եմ***՝

Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2021թ. բյուջեի նախահաշվում կատարել վերաբաշխում համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավարի ժ/պ Տ. Պողոսյան

2021թ. սեպտեմբերի 09

գ.Գառնի

ՀԱՎԵԼՎԱԾ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 09-Ի
N 245 ՈՐՈՇՄԱՆ

1. 08.2.4. նախահաշվի 4639 հոդվածի 4-րդ եռամսյակից 120.0 հազ. դրամ տեղափոխել 08.2.4. նախահաշվի 4639 հոդվածի 3-րդ եռամսյակ: